

**1.7. Խոշոր և միջին առևտրային կազմակերպությունների հաշվարկների վիճակը 2000թ. հուլիսի 1-ի դրությամբ**

2000թ. հուլիսի 1-ի դրությամբ հանրապետության մոտ 1300 խոշոր և միջին առևտրային կազմակերպությունների ընդամենը կրեդիտորական պարտքերը կազմել են 520211,9 մլն. դրամ և տարեսկզբի նկատմամբ աճել՝ 45891,2 մլն. դրամով կամ 9,7%-ով: Ընդ որում, կրեդիտորական պարտքերի ընդհանուր ծավալում կարճաժամկետ պարտքերի տեսակարար կշիռը կազմել է 92,5% (481128,4 մլն.դրամ): Տարեսկզբի նկատմամբ կարճաժամկետ կրեդիտորական պարտքերն աճել են 25318,4 մլն. դրամով կամ 5,6%-ով: Կարճաժամկետ կրեդիտորական պարտքերից 20623,4 մլն. դրամը կամ 4,3%-ը կազմել են ժամկետանց պարտքերը, որոնք տարեսկզբի նկատմամբ աճել են 701,0 մլն. դրամով կամ 3,5%-ով:

2000թ. հուլիսի 1-ի դրությամբ ընդամենը կրեդիտորական պարտքերի 55,5%-ը բաժին է ընկել մատակարարների և կապալառուների հետ հաշվարկներին: Տարեսկզբի նկատմամբ նշված պարտքերը նվազել են 2335,3 մլն. դրամով կամ 0,8%-ով, իսկ ստացված կանխավճարների գծով հաշվարկներն աճել են 1354,4 մլն. դրամով կամ 5,1%-ով:

**Խոշոր և միջին առևտրային կազմակերպությունների կրեդիտորական պարտքերի կառուցվածքը 2000թ. հուլիսի 1-ի դրությամբ**

	Տարեսկզբի մնացորդը	Հաշվետու ժամանա- կաշրջանի վերջի մնացորդը	մլն. դրամ Ավելացում (+), նվազում (-)
Կրեդիտորական պարտքեր, ընդամենը այդ թվում	474320.7	520211.9	+45891.2
երկարաժամկետ	18510.7	39083.5	+20572.8
%-ով ընդամենի նկատմամբ	3.9	7.5	x
կարճաժամկետ	455810.0	481128.4	+25318.4
%-ով ընդամենի նկատմամբ	96.1	92.5	x
այդ թվում՝ ժամկետանց	19922.4	20623.4	+701.0
%-ով ընդամենը կարճաժամ- կետ կրեդիտորական պարտքերի նկատմամբ	4.4	4.3	x
Ընդամենը կրեդիտորական պարտքերից հաշվարկներ մատակարարների և կապալառուների հետ	290857.9	288522.6	-2335.3
%-ով ընդամենը կրեդիտորա- կան պարտքերի նկատմամբ	61.3	55.5	x
Հաշվարկներ ստացված կանխա- վճարների գծով	26562.2	27916.6	+1354.4
%-ով ընդամենը կրեդիտորա- կան պարտքերի նկատմամբ	5.6	5.4	x

Հայաստանի կազմակերպությունների միջև կրեդիտորական պարտքերը կազմել են 438809,3 մլն. դրամ կամ ընդամենի 84,4%-ը, ԱՊՀ երկրներինը՝ համապատասխանաբար 51326,9 մլն. դրամ կամ 9,9%-ը: ԱՊՀ երկրների կազմակերպությունների պարտքերի 95,2%-ը բաժին է ընկել Ռուսաստանի Դաշնությանը:

2000թ. հուլիսի 1-ի դրությամբ հանրապետության մոտ 1300 խոշոր և միջին առևտրային կազմակերպությունների ընդամենը դեբիտորական պարտքերը կազմել են 476343,1 մլն. դրամ և տարեսկզբի նկատմամբ նվազել՝ 15829,3 մլն. դրամով կամ 3,2%-ով: Ընդ որում, երկարաժամկետ դեբիտորական պարտքերը նվազել են 378,3 մլն. դրամով կամ 2,5%-ով, իսկ կարճաժամկետ պարտքերը համապատասխանաբար՝ 15451,0 մլն. դրամով կամ 3,2%-ով: Կարճաժամկետ դեբիտորական պարտքերի 6,4%-ը (29386,0 մլն. դրամ)

կազմել են ժամկետանց պարտքերը, որոնք տարեսկզբի նկատմամբ աճել են 3921,5 մլն. դրամով կամ 15,4%-ով:

Ընդամենը դեբիտորական պարտքերի 76,5%-ը կամ 364397,1 մլն. դրամը կազմել են գնորդների և պատվիրատուների հետ հաշվարկները: Նշված պարտքերը տարեսկզբի նկատմամբ նվազել են 3201,9 մլն. դրամով կամ 0,9%-ով:

**Խոշոր և միջին առևտրային կազմակերպությունների դեբիտորական պարտքերի կառուցվածքը 2000թ. հուլիսի 1-ի դրությամբ**

*մլն. դրամ*

	Տարեսկզբի մնացորդը	Հաշվետու ժամանակաշրջանի վերջի մնացորդը	Ավելացում (+), նվազում (-)
Դեբիտորական պարտքեր, ընդամենը այդ թվում	492172.4	476343.1	-15829.3
երկարաժամկետ	15408.9	15030.6	-378.3
<i>%-ով ընդամենի նկատմամբ</i>	3.1	3.2	x
կարճաժամկետ	476763.5	461312.5	-15451.0
<i>%-ով ընդամենի նկատմամբ</i>	96.9	96.8	x
այդ թվում ժամկետանց	25464.5	29386.0	+3921.5
<i>%-ով ընդամենը կարճաժամկետ դեբիտորական պարտքերի նկատմամբ</i>	5.3	6.4	x
Ընդամենը դեբիտորական պարտքերից հաշվարկներ գնորդների և պատվիրատուների հետ	367599.0	364397.1	-3201.9
<i>%-ով ընդամենը դեբիտորական պարտքերի նկատմամբ</i>	74.7	76.5	x
Հաշվարկներ տրված կանխավճարների գծով	14653.3	10483.3	-4170.0
<i>%-ով ընդամենը դեբիտորական պարտքերի նկատմամբ</i>	3.0	2.2	x

Հայաստանի կազմակերպությունների միջև դեբիտորական պարտքերը կազմել են 423251,4 մլն. դրամ, կամ ընդամենի 88,9%-ը, ԱՊՀ երկրներինը համապատասխանաբար՝ 26004,4 մլն. դրամ կամ 5,5%: ԱՊՀ երկրների կազմակերպությունների դեբիտորական պարտքերի 82,5%-ը բաժին է ընկել Ռուսաստանի Դաշնությանը, 11,0%-ը՝ Վրաստանին, 3,5%-ը՝ Ուկրաինային:

2000թ. հուլիսի 1-ի դրությամբ դուրս գրված անհուսալի դեբիտորական պարտքերը կազմել են 5899,0 մլն. դրամ, կամ ընդամենը դեբիտորական պարտքերի 1,2%-ը, իսկ դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքերը համապատասխանաբար՝ 341,9 մլն. դրամ կամ 0,1%-ը:

2000թ. հուլիսի 1-ի դրությամբ կրեդիտորական պարտքերը գերազանցել են դեբիտորականին 43868,8 մլն. դրամով կամ 9,2%-ով: